

ԲԱՃԱՆՈՐՈՒ ԿՐՈՒԹԻՒՆ
 Պոլսոյ իւր հասարակական
 Տարեկան 10 Գր.
 Վեցամսեայ 5 Գր.
 Արտասահմանի հասարակական 12 Գր.
 Վեցամսեայ 6 Գր.
 ԿԱՒԻՍԻՎ ՎՃԱՐՆԵՐ
 —(—)
 Գրութիւնք և չիւն շտապ
 —(—)
 Ծանուցման տղր 27 սանդիկ
 և Երեկոն առ ի սն-
 զանկերու համար 20 ՕՊ
 զեղ կըլլայ :

ՇԱՐՋՈՒՄ

Նամակ և գրամ գրկի
 և յարգութեան և հասցիին
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՆՈՒԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: А. Сукьясовъ.

ՕՏԱՐ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐ

Ի զմիտէն կը գրեն թէ այն սեղի հայերէն ոմանք սկսեալ են իրենց զաւակները օտար վարժարաններ զրկել: Գծրախտաբար այս իրողութիւնը միայն Մամուրեանի քաղաքը չէ որ կը պատահի: Պոլսոյ մէջ, Հայաստանի խորքը, Ռուսմանիա, մեր շուրջը, ամէն ուր կը լսենք նոյն ախար յանգեալը. «օտար դպրոց», որովհետեւ ազգայինը գոհացուցիչ չի ճակ չունի:

Նախ սկզբունքով պէտք է ընդունիլ թէ դպրոց մը որ հայ ազգային դրոշմը կը կրէ, սրբան ալ աննախանձելի լինելու մը ունենայ, թէ մանկավարժական և թէ ազգայնութեան տեսակետով շատ աւելի օգտակար կըլլայ մեր ազգայնոց քան ուրիշ օտար միջավայր մը, ուր հայ մանուկը կըրնայ զարգանալ այնչափ միայն որքան վարդ մը որ բունէն կըրտուելով Միսիսիոյ մէջ խորշը, սառեալուն խնամքին յանձնուի:

Անշուշտ ըսել չենք ուզեր թէ մենք հակառակ ենք օտար վարժարաններու: Բնականապէս կը փափազուինք որ կարելի եղածին չափ բազմաթիւ ըլլան հայ ուսանողները այդ կրթական յարկերու տակ: Իայց ո՛չ թէ նախապէս կրթարաններու մէջ:

Նախակրթութիւնը, դաստիարակութեան ամենէն կարեւոր մասը, ազգին պարտքն ու իրաւունքն է: Գտնապարտիլ պարտաւանջութիւն մը կը գործէ այն հայ ծնողը, որ իր զաւակը կը զրկէ հայ դաստիարակութեան մը բարեբերէնէն, և անխորհրդաբար կը կարծէ թէ՛ ուրիշ օտար բարեկարգ դպրոց կրնայ փոխանակել ազգային անգոհացուցիչ վարժարանը:

Որդեսիրութեան առաքելութիւնը շատ աման գնել է ասիկա: Եւ ատոր համար ալ աման ապրանքի մը պէս անարժէք է: Ազգ. դպրոցի մը անգոհացուցիչ կացութեան մէջ ըլլալը երբեք արդարացում մը չէ: Ո՞վ կար-

գիլէ ձեզ որ օտար վարժարանի մը չվերածէք զայն, և զո՞չ չմտաք անկէ: Իայց այդ բանին համար զոհողութիւն ընել պէտք է. և ճիշդ այդ է որ կը խրաչեցնէ ձեզ. նա մանուսեղ որ օտար վարժարանը, շատ անգամ, ձեզ մէջ թողակ խնդրելու ձանձրոյթն ալ չի տար ձեզ: Իայց դիպե՛ք որ այդ փախուստը, այդ դատաւրութիւնը, ձեր հայու և քաղաքացիի բարի համբաւին խոր հարուած մը տալէ զատ, զարհուրելի անակընկալներ կը պատճառուէ ձեզ համար ապագային: Որովհետեւ դուք հայ պիտի մնաք, և ձեր դիրքը պիտի ունենաք օտար զաւակ մը, որ ո՛չ ձեզ պէս կը մտածէ, ո՛չ ձեր հայեացքները ունի և որ մէկէ աւելի պարզապէս մէջ ձեր քթին պիտի խնդայ: . . .

Այս յանցանքը ձերը ըլլալով յուսե՛աք անմիջապէս պիտի մնաք: Զափաղանց յոռետեսի կարծիքներ չեն տանք: Օտարամտութիւնը շատոնց մուտք գտած ըլլալով մեր մէջ, անոր աւերիչ արդիւնքներն ալ շատոնց տեսնելու գծրախտութիւնը ունեցած ենք:

Հայ մանուկին համար անհրաժեշտ է որ ազգային նախակրթարան մը աւարտած ըլլայ: Ամենուն շահը այս կը պահանջէ. աղուն ալ, ընտանիքին ալ, ազգին ալ, և նոյն խի այն երկրին ուր կայրինք. որովհետեւ այն որ ընտիր հայ մը չէ՛ բնաւ ընտիր քաղաքացի չը կրնար ըլլալ այն երկրին համար զոր ընդունած է իր երկրորդ հայրենիքը: Եւ ազգային նախակրթարանի մը առաւելութիւններէն զրկելով ձեր զաւակները, պարզապէս, ինքնութիւնը կորսնցուցած, զանազան ուժերու մէջ շուտաւ, ինչ ըլլալն ալ, ինչ ըլլալիքն ալ չգիտցող սեռունք մը պիտի արտաբերէք, յար և նման այն անգոյնի թողութիւն տարրին՝ որ, ժողովրդային բարբոտով «անուշ ջուրի եւրոպացի» կը յորջորջուի:

Եւ խորհիլ թէ այդ աւերութեն կրնար ազատ մնալ քիչ մը զոհողութիւն յանձն առնելով, և զուր-

գուրալով ձեր ազգ. դպրոցին վրայ այն ջերմութեամբ որով կը գուրգուրաք ձեր ընտանիքին ու զաւակաց, ձեր կեանքին վրայ:

ԿԱՄԵՐ ԱՐՇԱԽԻՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւրիկ, 1 Սեպտ.

Հայերի ստացարարները. — Բարանդուրի քրիստոսեան հայ գիւղերի վիճակը. — Կարասայ. — Պարսից վերջին փոխառութիւնը. — Էմիր-Նիզամ. — Բարեգործութիւնը շահագործուող և:

Ասորիները կրօնափոխութիւնը վատ ենք գործել նաեւ հայերէս վրայ: Մի քանի հայ գիւղեր այս վերջերս մտադրուած են հետեւել ասորիներին օրինակին. ձեզ Լուսաւորչի կրօնը եւ դառնալ ուս-օրթոյնքս . . . : Մենք այնքան չենք մեղադրում այս խեղճ ու հարստահարած հայերին, որքան Ասորպատականի թեմական առաջնորդին, որը հոգ չէ տանում ժողովրդին, չէ պաշտպանում հարստահարողներին դէմ, և ոչ միայն այս պէս անուրի, այլ և նրանց հոգեւոր պէնքերի վրայ էլ խղճի մտք չէ հսկում. ոչ դպրոց դռնի թիւն ունի և ոչ էլ խելքը գլխին քահանայ. երանի չէ՛ր որ գէթ խելքը գլխիցը պակաս մի քահանայ դառնար . . . :

Տեսնենք ի՞նչ դիրք է բռնելու նոր առաջնորդը: Նախորդը արդէն իր կենցաղապէս Եւ անհոգ ընթացքով հայութեան գլխին մեծ շարժներ բարդեց, որոնց դարձանք սպասում է նորից:

Ուրմիոյ չըջակայքում Բարանդուրի 14 հայ գիւղերից եւ ոչ մինը այսօր քահանայ ունի. . . : քացի այդ, չունեն դպրոց եւ ուսուցիչ: Այս հայ գիւղացիք, պսակ, մկրտութիւն, թաղում և այլն. կատարում են ասորի քահանաների ձեռքով, անխտիր պակասում են ասորիներին նա, և հեռագնակ խտնովելով կորցնում են իրանց ազգային դրոշմը, ողին:

Այս խղճալի եւ քսամեղի կացութեան ծանր հետեւանք մեր ընթերցողներին աւելի լաւ հասկացնելու համար, յայտնում ենք նաեւ, որ ազգութիւնից հեռանալու վիճակին հասած այս գիւղացիք թրքախոս են, բնաւ ծանօթ չեն մայրենի լեզուին, հայ լինելին հաստատելու համար վկաների կարիք է զգացվում . . .

Վհատաբար վերջապէս յիշելով Պարսկաստանի հայ ժողովուրդը՝ սրտնից մի քանի ամիս առաջ Սարգստ

ազարկեց կաշիկ վրդ. Տասնանցին, որի վզին է ընկում յիշեալ հայ գիւղերը կորուստից փրկելը:

Եւ միթէ՞ անարժան կղերների պատճառով չէ, որ հայութիւնը հեռագնակ զանազանութեամբ է դեպի պարսկ. զէպի կործանում է դիմում: Լուսմ ենք թէ բնիկ վանեցի գաղթական Տէր Աւետիս Շաղոյեան ուսուցիչ եւ ազգասէր քահանայն, ման է գալիս յիշեալ գիւղերում և ժողովուրդը միմիջարում . . .

Իայց մի քահանայ կարող է անզական բազմաթիւ պահանջներին գոհացում տալ: Եւ միթէ միայն հոգեւոր պէնքերն են կարեւոր, մասաւորապէս եւս հոգալը նոյնքան անհրաժեշտ չէ՞:

Միեւնոյն ախար երեւոյթը ներկայացնում են նաեւ, քիչ տարբերութեամբ, Գարատաղի (Բայազետական) երեսունից աւելի հայ գիւղերը: Մի երկուսը միայն ունեն իրանց քահանայն ու նախակրթարանը, միւսները այրում են որպէս խոտ և միւսում են իրր խոտ: Այսպէս, բոլորովին անխնամ միացած ժողովրդից ազգը ի՞նչ կարող է յուսալ . . . :

Եւ կարծում եմ թէ առաջնորդները աւելի մեղքը ծանրանում է կաթողիկոսի վրայ, որովհետեւ Պարսկաստանը ուղղակի կաթողիկոսի իշխանութեան և պատասխանատվութեան է ենթակայ. հետեւաբար այս անխնամ և անբարեկարգ վիճակի միակ պատճառն ու պատասխանատուն կարելի է համարել կաթողիկոսին:

Կաթողիկոսը, եթէ կամենայ, շատ քան կարող է անել, ոչ ուսական կառավարութիւնը եւ ոչ էլ Պարսից կառավարութիւնը կարող են կաշկանդել կաթողիկոսին. նրա համար Պարսկաստանում գործելու ազատ ապարկ կայ, ինչո՞ւ չէ չարժում, ինչո՞ւ անտարբեր է գտնվում. արդեօք Պարսկաստանի համար էլ ենթակալվում է պէ՛ր վիճակի խիստ արամադրութիւններին . . . :

Երեմիական ողորմով ազգը չի փրկվի. պաշտօնի գիտակցութիւն եւ գործելու կամք է հարկաւոր . . .

Շարժումի 51 թիւին մէջ Գոկոս Փաշաեանի մի յոգուածը կարգացի, առհասարակ խորհրդածութիւնները շատ ճիշդ են, սակայն պէտք է խոստովանած, որ հարգողութեամբ լուրը շատ կանխատես էր:

Անշուշտ կը ներք Պ. քթիկը, եթէ յայտնենք թէ մի քիչ անապարիչ է լուրը հարգողը: Եւ կարծում ենք թէ ճիշդ միեւնոյն անապարանքն էր որ փորձանքի ենթակայեց էջմիածնի

ծանօթ 200,000 ռուբլի խնդրում : Այս կարգի ծանր և պատասխանատու հանգամանքներում բաւական չէ միայն լուրը վերապահութեամբ հաղորդել, այլ և հարկաւոր է վերջնական և վճարական ստուգութիւնը : Մենք էլ շատ մեծ հաւատք չունենք էջմիածնի արդի վարչութեան վրա : մենք էլ համոզվել ենք, որ այնտեղ անդի են ունենում զեղծումներ : սակայն չենք կարող ներկայացնել ճիշդ այնպէս, ինչպէս ներկայացրել էր Պ. Բժիշկը : անձերով, անուններով, դէպքերով և որոշ քանակութիւնով :

Ճիշդ է որ Պարսից կառավարութիւնը փոխառութեան համար զիմել էր Անգլիացիներին, ճիշդ էի որ Անգլիացիները համաձայնվել էին վճարել հարկաւոր գումարը, փոխառութեան ընդունելով, սակայն վերջին րոպէներում ուստական արծիւը իր անեղ թեւերը տարածեց այդ խնդրի վրա, և ուղեց խել անգլիացիներին բերնից այդ մեծ պատար... Այժմ իրար ձեռքից քաջում են, խնդրը բոլորովին դեռ առկա և անլոյծ է յիշում, իրաւունքը զօրաւորին է մնալու... : ՄԻՐՁԱ.

Օ Ր Ը Օ Ր Ի Ն

ԳԵՊԱԿԱՌՆԵՐ

Այսպէս անունը այն գրքի ինչ որ Պ. Ճանկիւլեան վերջերս հրատարակ հանած է ազգ. յեղափոխութեան ծառայութիւն մը մատուցանելու բարի դիտումով :

Փութանք յայտարարելու թէ ընտանեկան շնորհակալութեան Գում. Գափուի հերոսը էր այս գործին համար :

Մենք միշտ առաջինը եղած ենք բողոքելու լուրը այն անձերուն դէմ, որոնք անձնական աստիճանները զգացումէն զրգուած՝ պարզ քաղցածի մը տեսնելու գտած են յանձին Պ. Ճանկիւլեանի, ջնջել ջանալով անջնջելի փառք մը : Եւ ահա յաւուր կը տեսնենք թէ Պ. Ճանկիւլեան ալ նոյն մեղքը կը գործէ, և կոյր մը դարձած՝ քացարձակ վճիռներ կարճակէ, մոռնալով թէ իր պարկեշտ մարդու պարտականութիւնն էր իւրաքանչիւրին իսկական արժանիքը ճանչնալ և հոչակել :

ՎԱՐԳ-ՊԱՏՏԻՎՈՒԹՅԱՆ ՅԵՆԱՍԱԿԱՐԱՆԸ (40)

Մինչ ևս խենթին էի դիտում, յանկարծ գուռը բացվեց և ներս բերին մի 17 տարեկանի չափ պատանի. վարակված վեներական ախտով, բայց ոչ այնտեղ ուր առհասարակ լինում է այդ ախտը... : Այդ թըրքական բարքերի սարսափեցնող ու քստմեղի փաստն էր...

Չը մոռանամ յիշել որ այդ ժամանակ հիւանդանոցում էր և երիտասարդ ու գեղադէմ Բուֆաթ բէյին բռնաբարողներից ու սպանողներից մէկը Սաադէտտին ըէյ, Սուլթանի մանդրեպարտներից կամ հանդերձ մատակարարողներից. տաճկական պալատին արժանաւոր պաշտօնեան : Սրան խոստովանցելու համար գըլխի և մարմնի վրա այնքան սառը ջուր էին անել և տանջել որ եղունգները ու մաղիւրը սկսել էին թափվել :

Բանտի մէջ իսկապէս սարսափելի տանջանքներ են գործ զնում թէ հայերի և թէ թուրքերի վրա : Սա-

Գրքոյի վեպ էր ըլլալ պարզանշակագիր մը սահմանում պարզութեամբ հասարակութեան թէ ինչ պարտաշնորհ տակ միութեան ձեռնարկը վրայեցաւ իր պատգամաւորութեան օրով : Այս ամենակարեւոր խնդրը սակայն գրեթէ կորսուած է չարք մը անպէս մանրամասնութիւններով մէջ, որոնք սպանած են գրքին սղին և զայն Պոքաջէօի մէկ վէպին հասարակացած : Ինչ ըսել կուզէ, երբ անհեթեթ հարուածներ կուտայ այնպիսիներու, որոնք գէթ յեղափոխականներ ալ չեն : Ինչու կենդանոցները կենանքը քննելու, և երկուստարակական միջադէպերը ազգային դաւաճանութիւն կը հոչակէ :

Գրքոյի ընթերցումը զգուշացի խոր սպաւորութիւն մը կը թողու :

Այս չէ որ կը սպասուէր անձէ մը, որ կէս ժամը անգամ մը ծրագրերը կը յղանայ ազգ. յեղափոխութեան մղում տալու նպատակով : Արդարեւ խոշոր կազմ մըն է զոր գործած է Պ. Ճանկիւլեան, առանց ականջ կախելու զինքը խրատողներուն, որոնք ամէն բանէ առաջ իր բարի համարը անաղբար պահել կուզէին : Եւ անաչառութիւնը պարտք կը դնէ մեր վրայ քննադատելու զինքը այս գործին համար, որ այնքան հասարակ է, որքան որ բարձր և հրաշագեղ էր իր Պատրիարքարանի պատմական աշխարհը :

Գ. Ա.

ՃԱՄԲՈՐԴԻ ՅՈՒՇԱՏԵՏԻՅ

—(—

ԳՈՒՆԱՐՈՒՆԵՐ

Բաւական երկար ժամանակ Տփլիս մնալուց յետոյ՝ ուր ուրախացնող հասարակական ոչ մի դէպք և երեւոյթ չը տեսայ, ճանապարհ ընկայ դէպի արտասահման, որը թէև արքայութիւն չէ, և մարդկութեան ու ժողովրդների մեծամասնութիւնը նոյնպէս տանջվում է ժամանակի պահանջներին անյարմար օրէնքների ծանրութեան տակ, բայց և այնպէս այնքան էլ չէ ենթարկվում վեհապետների քմահաճոյքներին, որոնց թեւերը մասամբ կտրել են Եւրոպայի ազգերը իրանց հաղարաւոր զոհե-

կայն մերոնցից ոչ ոքից չը կարողացայ հաստատ տեղեկութիւն ստանալ տանջվել են թէ ոչ : Մաքսիմովին մի քանի անգամ խնդրեցի ու շաղրութիւն դարձնի որ մերոնց չը տանջեն. նա պատուաւոր խօսք տեւց որ չեն կարողանում այդ բաները անել, քանի որ ինքը պաշտօնապէս մասնակցում է մեր դատին, և միշտ կարող է հարցնել այս կամ այն ընկերոջ և զազանիքը երեսան հանել : Չեմ կարող հաստատ կերպով ասել թէ որքան ճիշդ կերպով նա կատարեց այդ խօսքը : Երբ դատի ժամանակ հարցնում էի մեր ընկերներին, նրանք յայտնում էին որ միայն չափազանց սպառնում են, բայց չեն տանջում :

Դեռ հիւանդանոց չը տեղափոխուած, կարծեմ զեկանեմքերի սկիզբներին թէ նոյեմբերի վերջերին բերին իմ մեղադրական թուղթը ստորագրեմ, Գրված էր թուրքերէն. ևս չստորագրեցի առարկելով որ չեմ հասկանում թէ ինչ էր գրված և կը ստորագրեմ այն ժամանակ, երբ ուսակական թարգմանը ինձ կը յայտնէ

րով և անընդհատ կուռներով : Իմ ճանապարհը Թաթուրի վրայով էր. ունէի և երկու ուղեկից ընկերներ, որոնցից մէկը պաշտօնով գնում էր Տփլիսի մտակայ քաղաքներից մէկը : Այս պարոնը առաջարկեց մի օր իր մօտ հիւր մնալ, և ապա ճանապարհներս շարունակել : Միւս ընկերս և ես սիրով ընդունեցինք այդ առաջարկութիւնը :

Ճաշին արդէն հասանք մեր ընկերոջ տունը : Ճաշից յետոյ տանտէրը մեզ առաջարկեց գնալ և տեսնել ինչ որ մի վրացական աւերակ, որ գտնվում էր մտակայ լեռներում, բաւական զեղեցիկ անտառների մէջ : Ես գերադասեցի հանգստանալ, նրանք զնացին :

Երբ քնտեսվեցս վերկացայ, ընկերներս դեռ չէին վերադարձել, և իրանք էլ վատացել էր, երկիրը սեւ սեւ ամպերով ծածկվել. շուտով սկսեց անձրևել. այնպէս որ սկսեցի ձանձրանալ : Նոյն տան բակում պարում էին մի քանի տուն Գուխարներ, զնացի նրանց հետ խօսելու : Սրանք ուս աղանդաւորներ են, ոչ եկեղեցի ունեն, ոչ ժողովարան և ոչ էլ դերք : Ունեն Սաղմոսների նման երգեր, որ իրանք են յօրինել և երգում են բերանացի Աւելի հետեւում են ուս հաշակաւոր փրկիւտի կոմ Տօլստօին, որը քարոզում է շարին չը դիմադրել, չը պատերազմել, ժողովակ լինել. միայն անձնական կատարելութեան մասին աշխատել, և սուրբ ու բարի լինելու համար բոլորովին զերծ մնալ ամուսնական յարաբերութիւններից :

Տօլստօի քարոզութիւններից մեծ մասը փաստակար են համարում ուս շատ նշանաւոր և արժանաւոր մտածողներ ու չափազանց յարձակումներ են գործում նրա վրա չը նայած որ Տօլստօ

թէ պէտք է ստորագրել :

Շատ վերաբերված՝ այդ թղթերը ետ տարան. վերջապէս բաւական ժամանակ անցնելուց յետոյ՝ հասաւ դատվելու օրը :

Նախ քան դատելու տանելը, մի օր ուղեցին մեր պատկերները հանել. հանվողների թում կար եւ փոսաճի Արմենակը : Նա էլ քոսի պէս կողքիս կանգնեց : Կարծես կարտած սրբիլիս լինէր : Այդ սեղ համբերել չը կարողացայ, մի լաւ կրծքին զարկելով հրեցի մի կողմ և յայտնեցի որ այդ վատի հետ չեմ կարող կողք կողքի կանգնել և նկարվել : Թշուառականին մի կողմ քաշեցին. իսկ նա ձայն չը հանեց. միայն սուտ քրիստոսի պէս աչքերը կախ առաւ : Հասկացայ թէ պատկերները ինչի են հանում : Այնպիսի մի կերպարանք ընդունեցի, որ ամեն բանի կարող էր նմանել, բայց ոչ ինձ :

Վերջապէս առաջին անգամ դատարան գնացինք, և այն էլ ճաշից յետոյ : Մեզ տարան մի առանձին սենեակ Գրիգոր Գլճեանին, Արմենակին, Մարգար Մոմճեանին, Ն. Բ.

նշանաւոր վիպագիր է : հիւանդացած, ցնորած ուղեղ են համարում և առաջգիմութեան կենդանի ոգու ու եռանդի համար փաստակար մի վարդապետ :

Գուխարները աւելի հին աղանդաւորներ են քան Տօլստօի քարոզական ուղղութիւն ընդունելը, և բաւական ժամանակ է, որ աղանդաւոր լինելու համար, կովկաս են աքսորված Ռուսաստանի մի քանի նահանգներից : Այս լայնատարած և բազմաթիւ բնակիչ ունեցող երկրում բազմազան աղանդներ կան. ժամանակ չունեմ և ոչ էլ ձեռնահաս եմ համարում ինձ մանրամասն դրել այդ աղանդների մասին : Միայն այսքանը կարող եմ ասել, որ այդ բազմաթիւ և շատ անգամ բոլորովին ծիծաղելի աղանդներ առաջացել են Ռուսական ճնշող սեղմված կեանքից : Մտածող գրողները պատէ պատ ևն ընկնում իրանց միջք և հոգին լուսաւորելու համար. դիտութիւնը շատ սեղմված լինելով և անբաւական բողոքող մտքերի մէջ զարթած զանազան բարդ հարցերին բաւարարութիւն տալու, խելացի ուղեղները և բողոքող տարրը միայն կրօնի քննութեան ուղիով է գնում : Դրանով էլ առաջանում են շատ աղանդներ, այսինքն բողոքողներ միայն կրօնական տեսակետով, ուրեմն միակողմանի, շատ անգամ բոլորովին աննպատակ և անօգուտ :

Այնու ամենայնիւ ուս կառավարութիւնը հալածում է այդ աղանդաւորներին :

Գուխարներն էլ այդ դժբախտներից են :

Եթէ չեմ սխալվում տարիուկէս առաջ, Գուխարները Տօլստօի քարոզների ազդեցութեան տակ, որոշում են զինուոր չը տալ : Իսկոյն ամեն կողմից սկսվում են ունեցած հրացանները ոչնչացնելու արդէն ծառայութեան մէջ զբաղող քական Մկրտիչին. չէմ էճի Բողոքաւորին և ինձ. այսինքն եօթ հոգու : Շարվեցինք դատարանի առաջ, նրանց հետ էր և Մաքսիմովը. մեր ամեն մէկիս ետեւում մի ժանդարմ կար :

Նախագահը տալով սովորական հարցերը, վերջը հարցրեց.

— Ինչու գուք չէք ընդունել մեր ուղարկած մեղադրական թուղթը :

— Որովհետեւ ես չը գիտէի թէ այն թղթում ինչ կար գրված. կարող էի այնպիսի բան գրված լինել, որ ես չստորագրէի՝ մանաւանդ որ Պ. Մաքսիմովը չէր բացատրել ինձ թէ թղթի մէջ ինչ էր գրված, պատասխանեցի ես :

— Բայց միթէ դատարանը կարող է սուտ բան անել և ձեզ ստորագրել սալ :

— Թուրքաց դատարանը արդէն սուտ է. մտաւորապէս այս մաքով պատասխանեցի. բառերը որոշ կերպով չեմ յիշում :

(Շարունակելի)

նուսող զինուորները դադարում են հնազանդել իրանց իշխանաւորներին՝ ուստի կառավարութիւնը կատարում է . խիստ միջոցների է դիմում, կազակներ է ուղարկում Գուխարոնների գիւղերը, որոնք գտնվում են Ալեքսանտրապոլի, Ախլքալակի և Տիֆլիսի շրջաններում, նախ պահանջում որ Գուխարոնները ետ կանգնեն իրանց որոշումից և զինուոր տան, իսկ եթէ չը հնազանդեն խիստ կը պատժեն : Գուխարոնները հաստատ են մնում իրանց որոշման վրա . կառավարութիւնը որոշում է Գուխարոններին արտօրել, ցրվել և հրամայում է 15 օրվայ մէջ ծախեն իրանց բոլոր ունեցած շունեցածը :

Ահա այդ տեղ կազակները սկըսում են գործել : Գուխարոնները ձեռնվում, շարքվում և թալանվում են . նրանց կիները և աղջիկները բռնաբարվում . մի խօսքով կազակները նոյն գերն են կատարում Գուխարոնների վերաբերմամբ, ինչ գեր որ կատարեցին Համլտեանները հայերի :

Վերջի վերջոյ Գուխարոնները խնդր են տալիս ցարին, որ իրանց թոյլ տրվի գաղթել Կիպրոս . բարի ցարը (°) որ համայն մարդկութեան խաղաղութիւն է առաջարկում ի սէր ժողովրդների, համաձայնում է իր կազակների ձեռքով հալածված և տանջված Գուխարոնների գաղթելուն՝ մի հետու և անձանթ երկիր : Մինչև անգլիական կառավարութեան համաձայնութիւնն ստանալը՝ խեղճ Գուխարոնները ցրված են Տիֆլիսի նահանգի գիւղերում և նոյն տանջանքների ենթարկված ինչ տանջանքների ենթարկվեցին Սուլթան Համլտի ձեռքից փախած հայերը . . .

Բարեբախտաբար թէ գրգռախտաբար անգլիական կառավարութիւնը, իր օրէնքների ազատ ոգուն համաձայն վարվեց, և ցարից հալածված Գուխարոններին թոյլ տեց գաղթել Կիպրոս . նրանց մի մասը արդէն գաղթել է այդ նոր հայրենիքը :

Արևմտկից և հարազատ եղբայրների ձեռքով տանջված Գուխարոններից ոչ մի գանգատ չը լսեցի : Չարմանալի տոկունութեամբ նրանք գիմանում էին իրանց գժբախտութեան . աղքատների թիւը չը շատացնելու համար որոշել էին արևմտական յարաբերութիւնները ընդհանուր մինչ նոր հայրենիքը հասնելը . երիտասարդ ամուսինները ապրում էին իւր քոյր և եղբայր : Վիշտը արտայայտվում էր նրանց սաղմոսներում, նոյնպէս ճակատագրին հլու հնազանդ լինելը : Չարմանում էի բայց և ցուում, որովհետեւ այդ տոկունութեան միակ աղբիւրը կրօնական ֆանատիկոսութիւնը էր այդ մարդկանց, որոնք քարոզում են գիտութիւն, ուսում և գիւր պէտք

չեն . չարին չը պէտք է դիմադրել . աղքատների թիւը չաւելացնելու համար չը պէտք է ամուսնանալ . . .

ՎԱՐԴՈ

ՆՈՒԱԳԱՇԱՆԴԷՍ

Շարաթ իրիկուն տեղի ունեցաւ Պ. Նաթան Ամիրխանեանցի կազակերպած նուագահանդէսը աջակցութեամբ Օր. Լ. Ամիրխանեանցի և Պ. Տօթթօրօֆի :

Հանդիսականները սակաւթիւ էին . մեծ մասը պուլկար ուսուցիչներ է և ուսանողներ էր բազմաթիւ : Հայ ընտանիքները իրենց բացակայութեամբ կը վայելին . կարծես ապացուցանելու ուղիով թէ պուլկար ուսանողներու չափ իսկ չեն ըմբռնած երաժշտութիւնը, և հայ արուեստագէտ մը քաջալերելու պէտքը :

Հանդէսը սկսած էր եւ Պ. Ն. Ամիրխանեանց ու Պ. Տօթթօրօֆ Կուլեօֆ հեղինակած «Երուսաղէմ» անուն կտորին վերջեր կը դեղէրէին :

Լաւ կը յիշեմ որ հին բարի ժամանակներու մէջ մեր ազգային հանդէսները ազօթքով և կամ ազօթքի ձեւ երգերով կսկսէին . հոս ալ երուսաղէմով սկսել մտադրած են հանդէսին կազմակերպիչները . նախ որ Տիրոջ օգնութեամբ ձեռնարկին փայլուն անցնի, և երկրորդ անշուշտ ի յարգանս գերման կայսեր, որուն հողին վրայ ստրված է Պ. Ն. Ամիրխանեանց իր արուեստը և որ այս միջոցին զէպի . . . Երուսաղէմ կը ճամբորդէ :

Կարգացոյցի յիշատակելի միւս կտորներն էին Ալէ Մարիան, Պէթհօվէնի Սօնաթը, Ռօտի մէկ գասական կտորը, Թանհաուզէրէն մաս մը, և այլն :

Այս ամենուն մէջ Պ. Ամիրխանեանց ցոյց տուաւ բաւական վարժարուեստագէտի մը յատկութիւնները . իր ճկուն մատուցները, և ուշադիր նուագածութիւնը կապացուցանէին թէ բաւական իւրացուցած է իր վարպետներէն ուսածը, միայն թէ ինք այնքան երկշտ էր որ կարծես դաշնակին հրամայողը, տէրը չէր :

Իսկ իր առանձնականները, որոնք պարզ մէլօսիներու կարգը կրնային դասուել, ձմրան վրայ ըլլալով, պարագային շատ սիրուն կերպիւ յարմարեցան :

Օր. Լ. Ամիրխանեանց՝ որ մէկ քանի կտորներու մէջ կընկերանար իր եղբոր, կարգացոյցին մէջ վտօնէթէի դեր ունեցաւ . արդարեւ շատ չոր պիտի ըլլար հանդէսը, եթէ մի միայն երկու երիտասարդներ ըլլային շարունակ բեմին վրայ դուրս եկողները . լաւ մտածուեր է կնոջ շրջազգեստին ալ բաժին մը տալ սոյն նուագահանդէսին մէջ :

Պզտիկ յիշատակութիւն մըն ալ Օր. Եսթեր Ամիրխանեանցի համար, որ մեղ հասկցուց թէ ինքն ալ սկսած է զաշնակ զարնել սորվել :

Գարով Պ. Տօթթօրօֆի, կնկնդոցի լաւ հրամայող մըն էր, ուղած կողմը կը վարէր զայն թէեւ քիչ մը զօրաւոր կերպով : Եթէ քիչ մը անտոյնութիւն և քիչ մըն ալ արուեստ գնէր լաւագոյն ջութակի մը վրայ, այն ատեն շատ գոճ պիտի ըլլայինք :

Մէկ խօսքով, կարելի է ըսել թէ երաժշտական բաւական հաճելի երկերով մը անցուցինք, որուն կարժեր ներկայ գտնուիլ : Փափաքելի է որ Պ. Նաթան Ամիրխանեանց շարունակէ նուագահանդէսներ տալ : Մենք միշտ պատրաստ պիտի ըլլանք զինքը

ճախահարելու . նամանաւանդ եթէ ատաշխային ինք աւելի համարձակ ըլլայ դաշնակին առաջ, Օր. Լ. Ամիրխանեանց քիչ մը աւելի մեղմ ընկերակցի ջութակին երբ Ալէ Մարիան կը զարնուի, Օր. Եսթեր Ամիրխանեանց աւելի առաջդիմած ըլլայ և Պ. Տօթթօրօֆն ալ Տիրէթանթէ մը աւելի զգացող մը և յուզող մը զատնայ :

Ա.ՉԱԻՍ

ՊՈԼՏՈՅ ԿԵԱՆՔԸ

Ալ պիւտճէ չկայ, այլ ևս տեղեկութիւն չունին թէ ո՞ւր են, ուր կերթան : Ելեւմտագէտները յուսահատութենէ մազերնին կը փնթան : Այսպիսի դրութիւն մը որ ծանր պիտի նկատուէր աշխարհի ուէ ուրիշ մէկ երկրին մէջ, վրդովումներ սկսած է առաջ բերել նոյն իսկ այստեղ, ուր ամէն ոք վարժուած է և ոչ մէկ բանի վրայ չի զարմանալ : Այսու հանման մը գտնելու : Թահսին պէյ որ բոլոր թեւերը իր ձեռքին մէջ ամփոփած է, կը շարունակէ փայտիլ, երկնցած իր Ելլաղ-Քէօշքի բաղմոցին վրայ, ուսկից առանց հաշուելու, ամենէն անըջային խոստումները և ունայն քաջալերանքները կը շուայլէ :

Այսու հանդերձ անուրջը տեական ընկելու համար, Թոփ-Հանէի մէջ յանձնաժողով մը կազմուած է հանրօգուտ շինութեանց նախարար՝ Մահմուտ ձէլալէտտին փաշաի նախադատութեան ներքեւ : Այս յանձնախումբը ելեւմտական, երկաթուղիի, փոխառութեանց ծրագրերնէր կը յօրինէ և պետութեան աննիւքորներուն պահանջները կը քննէ : Բայց բնաւ արդիւնք չը տար, ու հանդիսաւորապէս կը թաղէ իրեն վստահուած բոլոր գործերը :

Յառաջդիմութեան պահանջումները գուցէ քիչ մը ցաւալի մտադրազուճներ կուտան Սուլթանին : Յայտնի էր Թուրքիա բոլորովին զրկուած է ելեւտարական նութեան կիրառութեանէն, որովհետեւ Սուլթանը սաստիկ կը վախնայ անկէ, իբր բնութեան ամենէն խորհրդաւոր ուժերուն մէկէն : Հասարակութիւնը վերջապէս կընդունում որ չէ թէ միայն Ամերիկայի և Արեւմտաքիքաղաքները, այլ նաեւ Արեւելքի մէջ, Պուրթէշ, Աթէնք, Գահիրէ, Ալէքսանդրիա, (և ի մօտոյ Սօֆիա ու Փիլիպպէ) ելեւտարական լոյս և թրամվէյ ունին : Ոսմանեան մեծ մայրաքաղաքը միայն զրկուած է արդի յառաջգիմութեան բարիքներէն . և այս իր վեհապետին անխորհուրդ քրմահաճոյքին համար :

Բոլոր անոնք որ Սուլթանին կը մօտենան, կըսեն թէ իր գլխատոր մտադրազուճն է ամէն տեղ հալածել «երիտասարդ թուրք» կոչուածները : Իր արհաւիրքը կը շահագործեն, աչքերուն առջեւ շարժելով Սուլթան Աղիզը տա-

պալոզ կուսակցութեան ուրուականը : Չը տեսներ թէ ինչ ապականած շրջանակի մը մէջ կը սեղմն զինքը քիչ քիչ : Եւ ինչ որ ինք յեղափոխական խումբի մը երազները կը համարի, այն դժգոհանքը, այն տառապանքն է զոր կը շեշտէ ամէն օր, անարժան անձերու ձեռքը թողլով ուժ մը որ պէտք էր նախարարներու պատկաներ :

Թան

ՔՐՈՆՆԻԿ

Ազգ. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը յայտարարութիւն մը հրատարակ հանելով, բացէ ի բաց կը ծանուցանէ թէ թոքախտոր հետզհետէ կը արածուի յիմարներու մէջ, որոնք խոնարհ կուղի մը մէջ կապրին, իրարու վրայ դժբախտութեան : Յայտնի է թէ յիմարանցի նորակառօյց շէնքը հիւանդներու յատկացուած էր առժամապէս . և սակայն մինչև հիմա կարելի չէ եղած բուն հիւանդանոցը կառուցանել և յիմարները ազատել այդ նկուղէն :

Յայտարարութիւնը կը յիշէ նաև թէ 344,567 զրուշի պէտք ունի հիւանդանոցը, իր պարտքերը վճարելու, պատասպարեալները հագուեցնելու, մառանը լեցնելու և այլնի համար : Ատոր չափ ցնցող և կսկծալի յայտարարութիւն քիչ անգամ տեսնուած է :

Վիէննայէ կը գրեն թէ Տ. Արոն վարդապետը այս պահուստին կը գտնուի, և թէ իրեն բարեբախտիկ ժամանումին առթիւ, հայկական մատուց մը կանգնելու խնդիրը նորէն երեւան եկեր է այն տեղի ազգայիններուն մէջ :

Վանէ Սեպտ. 15 թուով կը գրեն, թէ երկու գերմանացիներ հոն հասնել են և թէ ամիս մը պիտի մնան տեղային բեւեռագրերը հետազոտելու համար : Ըսողներ ալ կան թէ այդ գերմանացիները մանկանոց մը բանալու գիտաւորութիւն ունին :

Վառնաի թաղային ընդհ. ժողովը տեղի ունեցաւ անցեալ կիրակի օր : Եօթ անդամներէ բաղկացած ընտրողական ժողով մը որոշուեցաւ որ մօտերս պիտի ձեռնարկէ թաղ խորհրդոյ ընտրութեան :

Հ. Ամսօրեայէ կը տեղեկանանք թէ Պրանց Եօզէֆ կայսրը Վիէննայի ցուցահանդէսը այցելած ատեն մասնաւոր ուշադրութիւն դարձուցեր է Միլիթարեան սպարանի բաժնին : Կայսրը սիրալիր կերպով տեսակցեր է Աբրահայր Այտընեան Արոն Արքեպիսկոպոսին հետ, և հիացեր է հայերէն գրքերու, ձեռագրերու և մեծ երկրագունտին վրայ զոր գծած է Աբրահայրը 1845ին :

